

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի
ղեկավար Կարեն Զադոյանի բացման խոսքը**

Հարգելի գործընկերներ,

Ողջունիս խոսքը ցանկանում եմ սկսել սույն թվական սեպտեմբերի 2-ից 4-ը Մալազիայի Պուրաջայա քաղաքում տեղի ունեցած 16-րդ միջազգային հակակոռուպցիոն համաժողովի հիմնական ուղենիշների հնչեցմամբ.

- անպատժելիության վերացում,
- հակակոռուպցիոն կազմակերպական կառուցակարգերի զարգացում և բարեխղճության ուժեղացում.
- քաղաքացիական հասարակության զարգացում և հանրային վերահսկողության հզորացում:

Մրանք այն ուղենիշներն են, որոնք միջազգային հակակոռուպցիոն դերակատարները պահանջում են լուծել ազգային մակարդակներում:

Կոռուպցիան չարիք է, որը ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում, խոչընդոտում է երկրի տնտեսության և մրցունակության զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը և ազատությունների իրացմանը, օրենքի իշխանության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության զարգացմանը: Այս չարիքի դեմ պայքարը այսուհետ պետք է լինի մեր երկրի համար մեկ մարտահրավերը, որի լուծման համար պետք է համախմբել իշխանության և քաղաքական ուժերի, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների և չորրորդ իշխանության առողջ ներուժը:

Քաղաքացիական հասարակությունը հանձինս հակակոռուպցիոն ոլորտում գործող Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի, խորապես

գիտակցում է խնդրի լուծման գործում կառավարության հետ համագործակցության անհրաժեշտությունը և պատրաստ է խորը երկխոսություն սկսել երկրում հակակոռուպցիոն կազմակերպական կառուցակարգերի համատեղ մշակման և ներդրման նպատակով: Հակակոռուպցիոն կառուցակարգերի թվում ամենակարևոր տեղը ներկայումս գրավում է մեր երկրում Անկախ հակակոռուպցիոն մարմնի ներդրման կարևորագույն ինստիտուտը, որի անկախության ինստիտուցիոնալ ապահովման երաշխիքները կհանդիսանան Անկախ հակակոռուպցիոն մարմնի վերաբերյալ օրենքը և ուժեղ քաղաքացիական հասարակությունը, որը մշտապես թիկունք կկանգնի նորաստեղծ անկախ մարմնին: Անկախ հակակոռուպցիոն մարմինների միջազգային փորձը ցույց է տալիս, որ բարձրագույն քաղաքական կամքի առկայության պարագայում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության առումով միջազգային հանրությունը առավել արդյունավետ կառուցակարգ դեռևս չի մշակել, քան անկախ հակակոռուպցիոն մարմինը:

Կառավարության հետ երկխոսության հակակոռուպցիոն մյուս կարևորագույն կառուցակարգը ապօրինի հարստացման ինստիտուտի քրեկանացման հնարավորությունների քննարկումը և այդ ինստիտուտի բազմակողմանի ուսումնասիրությունն է. ինչպես հաջողված, այնպես էլ մտահոգությունների առարկա հանդիսացող միջազգային փորձի մանրակրկիտ ուսումնասիրությունը: Մեկ բան բոլորիս համար հստակ է ապօրինի հարստացման քրեականացման պարագայում մեր երկրում. էականորեն կպակասի բարձրագույն և միջին պաշտոնատար անձանց դոլյակների շքերթը, որը անգեն աչքերով կարելի է տեսնել ինչպես Երևանի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մյուս բնակավայրերում. իրենց տեղը զիջելով հանրային նշանակության կառույցներին՝ կրթական և մշակութային օջախներին, որակյալ ավտոճանապարհներին և հանրային այլ բարիքներին:

Այսօր մեր համար շատ կարևոր օր է, մենք սկսում ենք գործընթաց, որը կարող է անշրջելի դառնալ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարում և այս առիթով շնորհակալություն եմ հայտնում այսօր այստեղ հավաքված մեր բոլոր գործընկերներին. պետական պաշտոնյաներին, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին և լրագրողներին:

Վստահ եմ, որ մեր երկիրն ունի այն պոտենցիալը, որը մեզ կարող է դարձնել տարածաշրջանում մրցունակ, ժողովրդավարական և իրավական:

Շնորհակալություն: